



## Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Ք

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ  
ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

ԷԶՄԻԱՇԻՆ, ԿԱԹՈՒԿՈՍՈՍԱՐԱՆ

Ձերդ Գերազանցություն,

Իմ ամենասնկեղծ շնորհակալությունն եմ հայտնում Ձեր 20 հունիսի 1967 թվակիր նամակի համար. ցավում եմ, որ «Լ'Օստերատորն Ռոմանո» թերթի մի քանի ոչ ճիշտ արտահայտություններ տեղիք են տվել որոշ երկմտությունների: Արդարև, մենք քաջ գիտակցում ենք Մայր Աթոռ ս. Էջմիածնի տեղն ու դիրքը և կարող ենք Ձեզ հավաստիացնել, որ Նորին Սրբություն Խորեն կաթողիկոսը երբեք չի ուզեցել ներկայանալ որպես Հայաստանյայց եկեղեցու գլուխ, որպես ամբողջ հայ եկեղեցին ներկայացնող: Եթե Սուրբ Հայրը դիմել է նրան ասելով՝ «Հանձին Ձեզ Մենք ողջունում ենք ամբողջ հայ եկեղեցին»,—այդ նրա համար է եղել, որ նա ցանկացել է օգուտել այդ այցելության ատիթից՝ արտահայտելու համար իր ամբողջ հարգանքն ու ամբողջ սերը Հայաստանյայց եկեղեցու և հայ ժողովրդի նկատմամբ: Եվ որովհետև Նա գիտեր, թե ինչ տեղ է գրավում Ամենայն Հայոց Գերագույն կաթողիկոսը հայ եկեղեցու մեջ, ճիշտ դրա համար էլ Նա առանձնապես հիշատակել է Էջմիածնի Մայր Աթոռը որպես Հայաստանյայց եկեղեցին ղեկավարողը:

Մյուս կողմից,—և Ձերդ Գերազանցությունն այդ հասկանում է,—հենց այն հարգանքը, որ մենք ունենք դեպի հայ եկեղեցին, մեզ արգելում է միջամուխ լինել այն հարցերի մեջ, որոնք հավանաբար կարող էին քննարկվել այդ եկեղեցու ներսում: Վերջապես, կցանկանալի ճշտել Ձերդ Գերազանցությանը, որ «Լ'Օստերատորն Ռոմանո»-ն սուրբ Աթոռի պաշտոնաթերթը չէ: Այդ պաշտոնաթերթը «Ակտա Ապոստոլիկաս Սեդիս»-ն է: «Լ'Օստերատորն Ռոմանո»-ն օրաթերթ է, և Ձերդ Գերազանցությունը կհասկանա անշուշտ, որ դժվար է որոշ հանգամանքներում վերստուգել այն բոլոր արտահայտություններն ու տիտղոսները, որ տալիս են թղթակիցները, որոնք կարող են ճշտիվ իրազեկ չլինել Արևելքի սուրբ եկեղեցիների տիտղոսներին և կազմակերպությանը:

Հուսով եմ, որ այս մի քանի տողերը կփարստեն մտահոգությունները Ձերդ Գերազանցության, որն ամեն կերպ կարող է վստահ լինել Ամենայն Հայոց Գերագույն կաթողիկոսության նկատմամբ սուրբ Աթոռիս ունեցած բարի դիտավորությունների և տրամադրությունների մասին:

Շնորհակալություն հայտնելով Ձերդ Գերազանցությանը իր եղբայրական անկեղծության համար, խնդրում եմ բարի լինել ընդունելու հարգալից սիրո իմ զգացմունքների արտահայտությունը ի Տեր մեր Հիսուս Քրիստոս:

ԿԱՐԳԻՆԱԼ ԲԵԱ

ՎԱՏԻԿԱՆ, 11 ՀՈՒԼԻՍԻ 1967 Թ.

ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԳԻՆԱԼ ԲԵԱՅԻՆ՝ ՆԱԽԱԳԱՀ  
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ

ՎԱՏԻԿԱՆ

Հուզումով կարդացինք Ձերդ Գերազանցության 11 հուլիս 1967 թվակիր նամակը և ուրախությամբ հաստատեցինք, թե ինչքան, իսկապես, եղբայրական է Ձեր վերաբերմունքը դեպի հայ եկեղեցին և դեպի հայ եկեղեցու պատմական միակ կենտրոն սուրբ Էջմիածինը: Ձեր տված լուսաբանությունները «ԼՕսսերատորե Ռոմանո» թերթի մի քանի ոչ ճիշտ արտահայտությունների մասին Մայր Աթոռ ս. Էջմիածնի դիրքի և հեղինակության վերաբերյալ և մանավանդ Ձեր գրության անկեղծ ոգին գոհունակություն պատճառեցին մեզ բոլորիս:

Մենք համոզված ենք, թե Ձերդ Գերազանցությունը ճիշտ է հասկացել մեր արդար մտահոգությունները: Եվ կցանկանալիք հավաստիացնել Ձեզ, թե մենք ևս ճիշտ ենք հասկանում ու բարձր գնահատում Ձեր նամակի ոգին:

Ուրախալի է, որ եկեղեցիների միջև լինեն այսպիսի փոխադարձ եղբայրական սիրալից հարաբերություններ:

Սուրբ Ավետարանի ճշմարիտ ոգին է, որ ճառագայթում է: Կարծում ենք, թե համամիտ կլինեք, որ Ձեր վերոհիշյալ նամակը հրապարակենք Մայր Աթոռիս պաշտոնաթերթ «Էջմիածին» ամսագրում:

Ընդունեցեք, Ձերդ Գերազանցություն, Նորին Սրբություն Ամենայն Հայոց կաթողիկոսի ջերմագին ողջույնները և բարեմաղթությունները և մեր աղոթքները Ձեր նվիրական գործերի հաջողության համար:

«Եւ ինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս և Աստուած և Հայր մեր, որ սիրեացն զմեզ և ետ մեզ մխիթարութիւն յաիտենից՝ և յոյս բարեաց շնորհօք, մխիթարեացէ զսիրտս ձեր և հաստատեացէ յամենայն բանս և ի գործս բարութեան» (Բ. Թեա. Բ. 16—17):

Եղբայրական հարգալից սիրով ի Քրիստոս՝

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ատենապետ Գերագույն հոգևոր խորհրդի

Ս. ԷԶՄԻԱՄԻՆ, 12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1967 Թ.

